



#### 46. ԲՈՇԻՑ ԹԱԳԱՎՈՐ ՉԻ ԻԼԻ

Էլիլ է, շէլիլ մի քասիբ մարդ. էդ քասիբ մարդը գնում է մի հարուստ մարդից հարուր մանեթ փող վիր ունում: Էդ քասիբ մարդն ունենում ա մի տղա: Էդ հարուստ մարդ ամեն առավոտ դալիս ա էս քասիբ մարդից փողն ուզում:

Քասիբ մարդու տղեն ասում ա.— Ինձ տար ծախի, բեր պարտք տուր:

Սա հենց տղեն վիր է ունում, տանում թագավորի մոտ:

Ասում ա.— Հարուր թուման տուր՝ տղես տամ, պարտք ունեմ:

Հենց տղեն ծախում ա:

Էն ժամանակ թագավորը տալիս ա հարուր մանեթ ու տղեն վե կալում:

Քասիբ մարդուն հարցնում ա.— Տղեդ ի՞նչ գիտի, ի՞նչ փեշագի տեր ա:

Ասում ա.— Իմ տղեն ճանաչում ա մին մատնուկի աչքը, հենց մին էլ մարթն ա ճանաչում, մեկ էլ ձին ա ճանաչում:

Հետո տղեն թագավորի կշտին թողնում, ինք գնում ա:

Մի քանի վախտից եղը ձի են ծախիլիս ըլում, էս թագավոր իրեք հարուր մանեթ տալիս, ձին առնում ու էն տղին կանչում ա, ասում ա.— Որ ձին ճանաչում իս, էս ի՞նչ թավուր ձի ա:

Դա ասում ա, որ.— Էդ էն թավուր ձի ա օր, ջրում օր օքոմին

վեր ըլի, ջրումն անց կենալիս, օքմինը վրեն ջրումը կնստի, օքմինը կխեղտի ջուրը:

Թագավորը էն ձին ծախողին հետ ա կանչում:

Ասում ա.— Զիուդ ավիլ իմ իրեք հարուր մանեթ, դե,— ասում ա,— գնա մադիանն էլ բիր, շորս հարուր մանեթ էլ նրան պխտի տամ:

Ասում ա.— Մադիանն օր ցնկնելու վրա սրակեց, իսկ էդ ձին, որ առել ես, մենք գոմշի կաթով ենք պահել:

էնժամ մի մարթ վեր էլավ էդ ձիուն շուր մտավ: Հենց ձին ջրումը նստեց ու խեղդեց էն մարգին:

Թագավորն ասաց էն տղին.— Ասածդ շատ դուդ ա:

Հետո մի մատնուկ ծախող էկավ թագավորու մոտ, մատնուկը դրեց կշեռքի մի թայումը:

Թագավորին ասաց.— Դուն էլ փողը դիր կշեռքի մի թայումը, եթե քաշում քու փողը իմ մատնուկին վերցնի, մատնուկը՝ քեզ, եթե չէ՝ հենց քու փողը ինձ:

Հենց թագավորը իրեն կահքը ածում ա կշեռքի մի թայում, մատնուկը էլ շի վերցնում:

Գնում ա էն տղին հարցնում.— էս ի՞նչ թավուր մատնուկ է, որ էս իմ կահքը ածիլ իմ կշեռքի մի թայում, էլի եդ նրան հալում շի:

Դա գալիս ա ու մատնուկին մտիկ անում ու ճնաչում:

Թագավորին ասում ա.— Ինձ մի ոսկի տուր, մի պապիրոզ էլ: Հենց թագավորից առնում ու դնում ա մատնուկի քովը:

Ոսկին դնում ա մատնուկի աչքի վրա և պապիրոզի էն քուլն էլ վրան ածում, ձեռաց հենց մատնուկի աչքը վեր ա կենում: Գալիս ա, թագավորը շատ ա ուրախանում:

Տղին հարցնում ա.— Թե էդ ի՞նչ բան էր:

Ասում ա.— Թե դու մի թագավոր էս,— ասում ա,— օխտը քեզ պես թագավոր էլ էլնի, էդ մատնուկի աչքի հնարը շի գիտենալ:

Թագավորն ասում ա.— Ինչպե՞ս:

Տղեն ասում ա.— Հենց դա կնիկարմատի աչքն ա, դա,— ասում ա,— մի բանից շի կշտանալ,— ասում ա,— դրան էն կըշտացրուց, որ պապիրոզի քուլը աչքի վրա ածի, որ քու բանը լավ էկավ,— ասում ա,— եթե էդ քուլը շի ածիլ, քու բանը լավ չէր ըլի:

Դա ասեց, որ.— Ա՛յ տղա, դու որ էդ էրկու բանը ճանշիցիր, շատ դուդ էր,— ասում ա,— ես ի՞նչ թավուր մարդ եմ:



Տղեն ասում ա.— Դու ի՞նչ մարդ ես, իսկ բոշ ես ու բոշի տղա ես:

Թագավորը ըսեց.— Ինչպես շատ ա չրացել, դու,— ասում ա,— էդ խոսք խի՞ ասիր, ասա,— ասում ա,— ես ի՞նչ մարդ եմ:

էլի էդ տղեն ասում ա.— Եթե գլուխս էլ տաս, բոշ ես ու բոշի տղա ես:

Թագավորն ասավ.— Ջալա՛դ, էկեք գլուխ տվեք:

Տղեն ասաց, որ.— Թագավոր ապրած կենա, մեղքս մի վերու-նիլ, մորդ կանչե, նա դուզը կամի, նա մոգիտենա:

Հենց թագավորը մորը կանչեց, ասավ.— Մայրիկ ջա՛ն, ես ասում եմ ես ինչ մարդ եմ, սա ասում ա, որ դու բոշ ես ու բոշի տղա:

Մերն ասեց, որ.— էդ թավուր բան չկա:

էդ տղեն թագավորի մորն ասավ.— Տղեդ բոշ ա ու բոշի տղա:

Ուզեց, որ թագավորը գլուխ տա, հենց մերը թողուց ոչ:

Ասավ թագավորին.— Որդի՛, երբ որ քու հայրիկ սաղ էր, էն ժամանակը հայրիկ թագավոր էր, երբ որ մահացավ, ընդով ես էրկուֆոքիս ի: Հենց ժողովրդի ումիտ իմ էրկուֆոքիսութեն էր, երբ ըլի տղա՝ դնինք թագավոր, եթե ըլի հա՛ աղջիկ՝ մեր թագավորութեն արդեն վերջանար:

Ու եկան մեզ ղոնախ էլան, բոշ էրին մեզ ու էրկու կընիկար-մատին մի տղամարթ, էն կնանոց մինն էլ էրկուֆոքիս էր, էն էրկու կնկան, մին էլ տղին տարանք քնացրինք մեր օդումը: էն ժամանակ, էն գիշեր որ ղոնաղ ին, էն գիշեր ես ազատվեցի, էլավ աղջիկ: Տեհան, որ իրանց թագավորութենը վերջանում ա: Հենց իրանց օդում էն բոշեն ազատվում ա ու տղա բերում: Թագավորի մոր տատնմերներ գնում են, տենում, որ բոշի կնիկ տղա է բերել: Սրանք մտածում են, ասում.— Ի՞նչ անենք, որ լավ ըլի:

Հենց սրանք ասում են. «Թագավորի աղջիկը տանենք դնինք բոշի ծոցը, բոշի տղեն էլ բերենք թագավորի կնկա ծոցումը դնենք»:

էն ժամանակ թագավորի աղջիկ գողանում տանում և բոշի վնկա ծոցումը դնում և բոշի տղեն գողանում, բերում դնում թագավորու կնկա ծոցումը, որ իրանց թագավորութեն կորչի ոչ:

Որ էդ բոշի տղեն մենծանում ա, դնում են թագավոր: էլ եդ դրանց թագավորութենը վերջանում չի:

Թագավոր տեհավ, որ շատ տուզ ա էդ տղի ամեն բան, կանչեց էդ տղին, ասավ.— Ա՛յ տղա, երբ որ դուն համ ձին ճանանչեցիր, համ մատնուկի աչքը ճանանչեցիր, համ է, ես որ քեզ ասի,

ես ինչ մարդ եմ, ասիր որ «Բոշ ես, բոշի աղա ես» ու ես էլ ուզում էի, որ քո գլուխը տամ և մորս կանչեցի, մերս մատնեց, որ «Ամեն-բան էլ դուզ ա, էդ տղի գլուխ մի տալ»:

Քաղավորն ասավ, որ.— Հերդ քեղի ինձ վրա ո՞նց ծախեց:

Տղեն ասավ.— Հարյուր թումանով ծախեց:

Քաղավորն հանեց ու հարյուր մանեթ տվեց, ասաց, որ.— Քուս մոր կաթի պես քեզ եմ բախշել, քնա դու քո քյասիք հորը պըհի: Երբ որ քու իրեք բանն էլ դուս էլավ:

Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ շատ խոսողին:

